

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**2017թ. III եռամսյակի ընթացքում ԼՂՀ արդարադատության նախարարության  
աշխատակազմի  
իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության գործունեության  
վերաբերյալ**

2017թ. III եռամսյակի ընթացքում իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության կողմից որոշակի աշխատանք է կատարվել համակարգին վերապահված խնդիրների իրականացման ուղղությամբ:

Այսպես, հաշվետու ժամանակահատվածում պետական գրանցման են ենթարկվել 49 առևտրային և 8 ոչ առևտրային տիպի իրավաբանական անձ, 69-ի հիմնադիր փաստաթղթերի փոփոխությունները սահմանված կարգով գրանցվել են (ստացել են ընթացիկ գրանցում), իսկ 3-ի գործունեությունը դադարեցվել է:

2 իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանում և 3 հիմնարկ ենթարկվել են ընթացիկ պետական հաշվառման:

Պետական հաշվառման են ենթարկվել նաև 211 անհատ ձեռնարկատեր, 40-ը՝ ենթարկվել ընթացիկ պետական հաշվառման, իսկ 9-ի գործունեությունը դադարեցվել է:

Ըստ շրջանների գրանցման գործընթացի իրավիճակը բնութագրվում է հետևյալ կերպ.

անվանում	իրավաբանական անձ				իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանում և հիմնարկ				անհատ ձեռնարկատեր				ընդամենը	պետ. տուրք (հազ. դրամ)
	սկզբ	վեր ագ.	ընթ.	լուծ . (դա դա ր.)	սկզբ	վեր ահ.	ընթ.	լուծ	սկզբ.	վեր ահ	ընթ .	գործ. դադար		
<i>Կենտրոնական մարմին</i>	7		4				1						12	95
<i>Ստեփանակերտ</i>	27		42				1		74		17	3	164	961,5
<i>Ասկերան</i>	2								18		3		23	92,5
<i>Հաղբուժ</i>			3						11				14	50
<i>Մարտակերտ</i>	1		1						27		3	1	33	108,5
<i>Մարտունի</i>									19		3	1	23	61,5
<i>Շուշի</i>	20		18	3					58		11	4	114	628,5
<i>Քաշաթաղ</i>			1				3		4		3		11	38,5

<i>Ընդամենը</i>	57		69	3			5		211		40	9	394	2036
-----------------	----	--	----	---	--	--	---	--	-----	--	----	---	-----	------

Պետական միասնական գրանցամատյանից տրվել է 103 տեղեկանք:

Վերը նշված գրանցումների դիմաց գանձվել է 2 139 000 դրամ պետական տուրք:

Գործակալության կողմից մատուցած վճարովի ծառայությունների արդյունքում III եռամսյակում արտաբյուջե է մտցվել 340 000 դրամ:

Կազմակերպվել են նաև քաղաքացիների ընդունելություններ, նրանց բազմաթիվ հարցերին տրվել սպառիչ պատասխաններ:

Գործակալության կենտրոնական մարմնի կողմից սիստեմատիկ հսկողություն է իրականացվել պետական ռեզիստրի կառուցվածքային ստորաբաժանման նկատմամբ, տրվել ռլորտը կարգավորող օրենսդրության պարզաբանումներ և մեթոդական ցուցումներ:

**Գործակալության պետ՝ Գ.Մաքսիմովա**

**Կատարող՝ Ի.Առստամյան**